

ԿԱՆՈՆԱԳԻՐ

“ԿԱՄՔ”, ՄԱՐՄՆԱՄԱՐԶ. ԱԿՈՒՄԲԻ

ԵՒ

ՀԱՅ ՀԵՏԱԶՕՏԻԶՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

(Կ. Մ. Ս. Հ. Հ. Ը.)



ԱՂԵՔՍԱՆԳՐԻՑ.

ՏՊԱԳՐ. ԱՐԱՄ ԳԱՍԱՊԵԱՆ

—
1924

ՄՆՊ

- ԳԱԶԻՐԷ -

ԿԱՆՈՆԱԳԻՐ

“ԿԱՄՔ,, ՄԱՐՄՆԱՄԱՐԶ. ԱԿՈՒՄԲԻ

ԵՒ

ՀԱՅ ՀԵՏԱԶՕՏԻՉՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒՅԵԱՆ

(Կ. Մ. Ս. Ն. Ն. Ը.)



Ա. Գ. Ե. Ս. Ն. Ը.

ՏՊԱԳՐ. ԱՐԱՄ ԳԱՍԱՊԵԱՆ

1924

Քննուած եւ վաւերացուած Ազգ. Վարչութեան Քաղաք. Ժողովոյ
11 Դեկտեմբեր 1923ի 30րդ. նիստին :

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ե Ը

ԿԱՄԲ ՄԱՐՄՆԱՄԱՐԶ. ԱԿՈՒՄԲԻ ԵՒ ՀԱՅ ՀԵՏԱԶՕՏԻՉՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԵԱՆ

(Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը)

Ա. ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդուած 1. — Կամք Մարմնամարզական Ակումբը (կազմուած 1 Օգոստ. 1912-ին) և Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւնը (հիմնուած 13 Յունիս 1915-ին) միացած 30 Մարտ 1917-ին, կը կազմեն ամբողջութիւն մը՝ Կամք Մարմնամարզական Ակումբ և Հ. Հետազօտիչներու Ընկերակցութիւն (Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը) անունով :

Բ. ՆՊԱՏԱԿ

Յօդ. 2. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի նպատակն է Ա. սատարել նորահաս սերնդի բարոյական և իմացական զարգացման . Բ. տալ իր անդամներուն ֆիզիքական առողջ դաստիարակութիւն . Գ. սորվեցնել անոնց ըլլալ չարքաշ և ժուժկալ, կարգապահ և օրինապահ, արթուն, արագ և ճշտադատ, ձեռներէջ, կորովի և հայրենասէր . Դ. զարգացնել իր հետեւողներուն և անոնց միջոցաւ ցեղին մէջ պարտականութեան, պատասխանատուութեան և պատուի զգացումներ, համերաշխութեան և իրերօգնութեան ոգի :

Գ. ՄԻՋՈՑՆԵՐ

Յօդ. 3. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը. իր նպատակը իրագործելու համար կը կիրարկէ հետեւեալ միջոցները: Ա. կուտայ հետազօտչական կրթութիւն. Բ. շուէտական մարդանք՝ նորագոյն մեթոտներով. Գ. արլէքիք և արքիսքիք ներքին և արտաքին մրցումներ, գաշտային խաղեր (ֆութպօլ, պասքէթպօլ, ծովային մարզանք, գօտեմարտ, կուփամարտ ևլն). Գ. կը կազմակերպէ դաստիարակութիւններ՝ իր անդամներու և բանախօսութիւններ՝ հանրութեան համար, ծանօթացնելով անոնց մարմնակրթանքի սկզբունքները. Ե. կը հաստատէ մատենադարան, առաջադրուած նպատակի իրագործման ծառայող գրքերով. Զ. կը կազմէ նուազախումբ և կ'ուսննայ յատուկ մարզարան:

Գ. ԱՆԳԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 4. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ին կրնայ մասնակցել իբրև անգամ ինը տարեկանը լրացուցած ամէն հայ, առանց սեռի և դասանանքի խտրութեան:

Ծանօթ. Ա. — Իննէն մինչև տասնութ տարեկաններու համար ծնողաց կամ խնամակալներու գրաւոր հաւանութիւնը անհրաժեշտ է:

Ծանօթ. Բ. — Հ. Հետազօտիչներու շարքերուն մէջ իննէն տասնութ տարեկան եղողները միայն կրնան մտնել: Սպանները բացառութիւն կը կազմեն:

Ծանօթ Գ. — Հետազօտիչներու բաժնէն դուրս միև բաժիններու մէջ բացառաբար օտար անդամներ ալ կրնան

մանել, աւանց սակայն ժողովներուն մասնակցելու և ձայն ունենալու իրաւունքի :

Յօդ. 5. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի անդամները կը բաժնուին երեք կարգի. Ա. Գործօններ, որոնք կանոնաւորապէս կը հետեւին մարզանքի. Բ. Օժանդակներ, որոնք աւանց մարզանքի հետեւելու, կանոնաւորապէս անգամաւճար կուտան. Գ. Պատույ անդամներ, որոնք նուազագոյն քսան հինգ ոսկույ միանուագ նուիրատուութիւն կ'ընեն և կամ գնահատելի ծառայութիւն մը կը մատուցանեն Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ին :

Ծանօթ. — Պատույ անդամները կը ներկայացուին Վարչութեան կողմէ Ընդհ. Ժողովին՝ առ ի վաւերացումն :

Յօդ. 6. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ին անդամակցելու համար պէտք է գրաւոր խնդրանք ներկայացնել Վարչութեան, որ յետ քննութեան կը մերժէ կամ կ'ընդունի :

Յօդ. 7. — Անդամի մը անդամատուրքն է՝ գործօններու և օժանդակներու համար՝ առ նուազն հինգ դ՛. ոլջի, իսկ գպրոցականներու համար՝ երկու դ՛. ոլջի ամսական : Օտար անդամները կը վճարեն յիսուն դ՛. ոլջ՝ մուտք և տասը դ՛. ոլջ՝ ամսական :

Ծանօթ. Ա. — Վարչութիւնը իրաւունք ունի իբր գործօն անդամ ընդունիլ այն երիտասարդները, որոնց նիւթական վիճակը չներեր ս' և է վճարում ընելու :

Ծանօթ. Բ. — Աղեքսանդրիոյ ազգ. վարժարանաց ուսանողները Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի մարմնամարդական գործիքներէն և գոյքերէն ազատօրէն կրնան օգտուիլ՝ վարժարանի մարզանքի սուուցչին տաճնորդութեամբ :

Ծանօթ. Գ. — Թէնիսի, պօքսի և մարզանքի նոր հաստատուելիք ո՛ր և է ճիւղի համար անդամներու կողմէ ըլլալիք վճարման սակը կ'որոշուի օրուան վարչութիւնէն :

Յօդ. 8. — Ո՛ր և է անդամ Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը. -էն դուրս ուրիշ մարմնամարդական հաստատութեան չկրնար մասնակցիլ, առանց օրուան վարչութեան յատուկ արտօնութեան :

Յօդ. 9. — Յաջորդաբար երեք ամիս իր անդամավճարը չտուող անդամը՝ յետ ազդարարութեան՝ անդամակցութենէ կը դադրեցուցուի, եթէ չվճարելուն պատճառը վարչութեան կողմէ ընդունելի չհամարուի :

Ե. ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 10. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը. ունի Ընդհանուր և վարչական ընդամէն՝ երկու ժողովներ :

Յօդ. 11. — Տասն ութը տարեկանէն վեր ելող գործօն, օժանդակ և պատուոյ անդամները կը մասնակցին Ընդհ. ժողովներուն ընտրելու և ընտրուելու իրաւունքով : Տասն ութը տարեկանէն վար ելողները նոյն ժողովին կրնան ներկայ ըլլալ խորհրդակցական ձայնով :

Ծանօթ. — Ընտրելու և ընտրուելու իրաւունք ունեցող անդամները պարտաւոր են նաև՝ մինչև ժողովին թուականը՝ իրենց անդամատուրքերը վճարած ըլլալ :

Յօդ. 12. — Ընդհ. ժողովը կը զուամարուի տարին մի անդամ և օրինաւոր կը նկատուի՝ մասնակցելու իրաւունք ունեցող անդամներու պարզ մեծամասնութեան ներկայութեամբ :

Ծանօթ. — Եթէ որոշեալ ժամուն մեծամասնութիւն չզոյանայ, մէկ ժամ վերջ ներկաներու թիւը օրինական նկատուելով՝ ժողովը կը բացուի օրինաւորապէս :

Յօդ. 13. — Ընդհ. ժողովը կրնայ բացառաբար ալ գումարուել, եթէ վարչութիւնը կամ Ընդհ. ժողովոյ Դիւանը նարկ տեսնեն և կամ եթէ ժողովին մասնակցելու իրաւունքը վայելող անդամներու մէկ երրորդը գրաւորապէս պահանջ ներկայացնէ Մայր Դիւանին :

Յօդ. 14. — Ընդհ. ժողովի Դիւանը ժողովի գումարումէն մէկ չարաթ առաջ պարտաւոր է անդամներուն հրաւիրագիր ուղղել, անոր կցելով օրակարգը :

Յօդ. 15. — Ժողովի ընթացքին կարելի է կազմուած օրակարգի վրայ նոր խնդիրներ աւելցնել, եթէ մեծամասնութիւնը հաւանի :

Յօդ. 16. — Ընդհ. ժողովի պաշտօնն է քննել վարչութեան նիւթական ու բարոյական դործունէութիւնը, ընարել նոր վարչութիւն և հաշուեքննիչներ, լուծել օրակարգի միւս խնդիրները :

Ծանօթ. Ա. — Հաշուեքննիչները կ'ընտրուին վարչութեան հետ միասին և Ընդհ. ժողովի գումարումէն տասն հինգ օր առաջ հաշուեքննութեան ձեռնարկելով, իրենց տեղեկագիրը կը տանին Ընդհ. ժողովի Դիւանին :

Ծանօթ. Բ. — վարչութեան տեղեկագրի և հաշուեկշիռի ինչպէս և Հաշուեքննիչներու տեղեկագրի մէջ մէկ վաւերական օրինակները Ընդհ. ժողովէն վերջ կը ղըրկուին Ազգ. Իշխանութեան՝ ի գիտութիւնս :

Յօդ. 17. — Ընդհ. ժողովը իր մէջէն կ'ընտրէ Դիւ-

ւանը՝ բաղկացած Ատենապետէ և Ատենադպրէ, որոց շքանք մէկ տալի է: Ասոնց բացառութեան՝ ժողովը կրնայ գումարուիլ, ընտրելով ամսամեայ Դիւան:

Ծանօթ. — Ընդհ. ժողովի Դիւանի և Վարչութեան անդամները վերընտրելի են:

Յօդ. 18. — Ատենապետը մէկ քուէի իրաւունք, իսկ քուէներու հաւատարմեան պարագային՝ որոշիչ ձայն ունի:

Յօդ. 19. — Ընդհ. ժողովի ատենադրութիւններն ու թզթակցութիւնները կ'ստորագրուին Դիւանին կողմէ:

Յօդ. 20. — Ընտրութիւններն ու քուէարկութիւնները կը կատարուին գաղանի և օրինաւոր են՝ մասնակցող ձայներու պարզ մեծամասնութեամբ: Քուէարկութիւնները բացառաբար ձեւամարտք ալ կ'ըլլան, եթէ ներկաներու մեծամասնութիւնը այնպէս հարկ դատէ:

Յօդ. 21. — Վարչական ժողովը կը բաղկանայ եօթն անդամներէ, որոնք կ'ընտրուին հետեւեալ կերպով: Ընդհ. ժողովը նախ զազանի քուէարկութեամբ Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի անդամներէն մին կ'ընտրէ Վարչութեան ատենապետ, որ իր կարգին Ընդհ. ժողովին կը ներկայացնէ իր վեց պաշտօնակիցներուն ցանկը՝ առ ի վաւերացումն:

Ծանօթ. Ա. — Նախապէս Վարչութեան ատենապետութիւն վալած անձերէն դուրս՝ Ատենապետ կրնան ընտրուիլ նաև անոնք միայն՝ որոնք առ նուազն հինգ տարիէ ի վեր Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ին անդամակցած և զէթ մէկ տարի Վարչական ժողովի մասնակցած են: Իսկ Վարչութեան անդամ կրնան ընտրուիլ անոնք միայն, որոնք

առնուազն երկու տարիէ ի վեր Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը. -ին ան-
դամակցած են :

Մանօր Բ. — Տարւոյն մէջ հետացող վարչական ան-
դամի փոխարէն Վարչութիւնը կ'ընտրէ և կը հրաւիրէ
ուրիշ մը, իսկ աստեղծուող հրաժարման պարագային՝
կը գումարուի իսկոյն բացասիկ Ընդհ. Ժողով, որ կ'ընտրէ
նոր աստեղծուող և կը վաւերացնէ անոր կողմէ ներկա-
յացուելիք Վարչութեան անդամները :

Մանօր Գ. — Տարուան մէջանդ ընտրուած Վարչու-
թիւն մը կը լրացնէ սկսուած շրջանը միայն :

Յօդ. 22. — Վարչութեան շրջանը մէկ տարի է,
Յունվար 1է 31 Դեկտ. : Շրջանը լրացուցած Վարչու-
թիւնը առ առաւելն մէկ ամիս միայն կրնայ շարունակել
իր պաշտօնը : այնուհետև ինքնին ղաղրած կը նկատուի
և կը գումարուի Ընդհ. Ժողով, ընտրելու համար նոր
վարչական Մարմին :

Յօդ. 23. — Վարչութիւնը գտնէ շարաթ մէկ անգամ
պէտք է որ Ժողով գումարէ : Վարչական Ժողովի նիւ-
տերը օրինաւոր են՝ երբ անդամներու կէսէն մէկ աւելին
ներկայ է :

Յօդ. 24. — Վարչական Ժողովի որոշումները կը
արուին ներկաներու մեծամասնութեան ձայնով : Քուէ-
ներու հաւասարութեան պարագային՝ աստեղծուող ձայնը
որոշիչ հանգամանք կ'ստանայ :

Յօդ. 25. — Վարչութիւնը՝ բացի աստեղծուող կ'ու-
նենայ մէկ աստեղծուողի, որ կը պատրաստէ աստեղծու-
թիւնները և կը վարէ թղթակցութիւնները. մէկ զանձա.

պահ, որ կը կատարէ դրամական գործերը. մէկ զոյքապահ, որ առանձին տեսրակի մէջ կ'արձանագրէ Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի բոլոր զոյքերը և կը պահպանէ զանոնք և մէկ հաշուակալ, որ բոլոր հաշիւները կը բռնէ կանոնաւոր տեսրակներով: Ատենապետը կը վարէ Ժողովները, կը հակէ որոշումներու օրը օրին գործադրութեան, կ'ստորագրէ աստեղագրի հետ՝ թղթակցութիւնները և զանձապետին հետ՝ բոլոր հաշուական թղթերը, բաց ի ընկալազրեքէ, որոնք կ'ստորագրուին զանձապետին կողմէ և կը կնքուին Վարչութեան կնիքով: Ատենապետը իրաւունք ունի իր պարտականութեան մէջ թերացող Վարչական անդամի պարագան ժողովի նիւթ դարձնել և մեծամասնութեան որոշումը առնելէ յետոյ, Ընդհ. Ժողովի Դիւանին հետ խորհրդակցարար՝ հրաժարականը պահանջել անկէ:

Յօդ. 26. — Վարչական Ժողովի պարտականութիւնն է Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի հետ կապուած բոլոր խնդիրներով զբաղիլ և անօրինութիւններ ընել. պատրաստել մարզանքի զանազան ճիւղերու ու նուազախմբի համար ներքին կանոնագիր և նշանակել վարիչներ, եթէ հարկ տեսնէ:

Յօդ. 24. — Հ. Հետադօտիչներու համար ներքին կանոնագիրը կը մշակէ՝ Խմբապետական Ժողովի հետ խորհրդակցարար՝ Գնդապետը և կը ներկայացնէ զայն՝ առ ի վաւերացումն՝ Վարչութեան, որ կարող է այս կամ այն յօդուածը ջնջել կամ բարեփոխել, Գնդապետի և Խմբապետական Ժողովի հետ խորհրդակցելէ վերջ:

Յօդ. 28. — Հ. Հետադօտիչներու Գնդապետը կը

ներկայացուի Խմբապետական Ժողովի կողմէ Վարչութեան՝ առ ի վաւերացումն :

Ծանօթ. — Գնդապետի և Խմբապետական Ժողովի իրաւասութեան ինչպէս և փոխ-յարարերութեանց սահմանը կը ճշդուի ներքին կանոնադրով : Գնդապետը կամ Խմբապետական Ժողովի ս՝ և է անգամ՝ եթէ Վարչութեան անգամ չէ, չկրնար մասնակցիլ Վարչական Ժողովի նիստերուն :

Ձ. ՀԱՍՈՅԹԻ ԱՂԲԻՆԵՐՆԵՐ

Յօդ. 29. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի հասոյթի աղբիւրներն են անդամալճարներ, նուէրներ, վիճակահանութեան, հանդէսներու, ներկայացումներու հասոյթներն և ըն. :

Ծանօթ. — Հասոյթներու ս՞րքան մասը մարզանքի ս՞ր ճիւղին յատկացնելու որոշումը կուտայ մի միայն Վարչութիւնը :

Է. ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդ. 30. — Ն՛րկայ կանոնադիրը, որ Ազգ. Իշխանութիւնէն վաւերանալու օրէն իսկ գործադրելի է, կրնայ փոփոխութեան ենթարկուիլ Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի Ընդհ. Ժողովի կողմէ, ձայնի իրաւունք ունեցող անդամներու երկու երրորդի մեծամասնութեան համաձայնութեամբ : Ամէն պարագային բարեփոխուած կանոնադիրը գործադրելի կը դառնայ Ազգ. Իշխանութեան կողմէ վաւերանալէն վերջ միայն :

Ը. ԿՈՒՆՈՒՄ

Յօդ. 31. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը. լուծուած կը համարուի, երբ ընդհանուր անդամներու թիւը տասնի իջնէ :

Յօդ. 32. — Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի լուծման պարագային՝ անոր ըստանդակ գոյքն ու զբամբը չէնքին հետ կը յանձնուին Ազիքսանգրիոյ Ազգ. Իշխանութեան ու կը նկատուին անոր սեփականութիւն :

Ընդհ. Ժողովի կողմէ կարգուած Կանոնագրի պատասուբեան Յանձնախմբի անդամներ.

ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆ ՇՐԱԶԵԱՅ ՓԷՇՐԻՋԵԱՆ ՅԱԿՈԲ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

15 Նոյեմբեր 1923

Աղեհասնորիա

Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի Վարչութեան

Ասենադպիր

Ասենապետ

ԹՈՎՄԱՍ ԳՕԶԻԿԵԱՆ ՍԱՀԱԿ ԴԵՐՁԱԿԵԱՆ

Կ. Մ. Ա. Հ. Հ. Ը.-ի Ընդհ. Ժողովոյ

Ասենադպիր

Ասենապետ

ՄԵՍՐՈՊ ԱՂԱՃԵԱՆ

ՏԷԼԷՄԱԲ ԹԻԹԻՆՆՃԵԱՆ



